

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ՈՒՄ ՆԵՐԴՐՎԱԾ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ և ՀԱՄԱԼՐՈՂ ՄԻՋՈՑՆԵՐԻ («ՀԱՐԿԱՏՈՒ 3» ՀԱՄԱԿԱՐԳԻ) ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ՇԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՊԵԿ-ՀԲՄ-ՕՁԲ-18/3**

ք. Երևան

<< 13 >>  2018թ.

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար Ա.Սահակյանի, որը գործում է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Այլունեթվորքս» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Վ.Մերանգույանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում ներդրված էլեկտրոնային համակարգերի և համալրող միջոցների («Հարկատու 3» համակարգի) սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն պունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **234 711 000 (Երկու հարյուր երեսուկչորս միլիոն յոթ հարյուր տասներկ հազար)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍՄԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵՒԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ոնդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ


ՀՀ կառավարությանն առընթեր
պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900011054013

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝

ԿԱՏԱՐՈՂ

«Այյունեթվորքս» ՍՊԸ
ք. Երևան, Պուշկինի 38/1, շին.55
ՀՎՀՀ 02588485
Հ/Հ 1930042785480100
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
«Այյունեթվորքս» ՍՊԸ-ի տնօրեն՝

Ա.Սահակյան



Վ.Մերանգույան



13

Հավելված N 1

2018թ. կնքված

ՊԵԿ-ՀԲՄ-ՍՁԲ-18/3 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ծառայության				մատուցման	
		տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	Ժամկետը**
1	72261180/1	ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում ներդրված էլեկտրոնային համակարգերի և համարող միջոցների («Հարկատու 3» համակարգի) սպասարկման ծառայություններ Տեխնիկական-բնութագիրը ներկայացված է ստորև	դրամ	234 711 000	1	Ներկայացված է տեխնիկական բնութագրում	Ներկայացված է տեխնիկական բնութագրում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ կառավարությանն առնթեր պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900011054013

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝

Ա.Սահակյան



ԿԱՏԱՐՈՂ

«Այյունեթվորքս» ՍՊԸ

ք. Երևան, Պուշկինի 38/1, շին.55
ՀՎՀՀ 02588485
Հ/Հ 1930042785480100

«Կոնվերս բանկ» ՓԲԸ
«Այյունեթվորքս» ՍՊԸ-ի տնօրեն՝

Վ.Մերանգույան



ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում ներդրված էլեկտրոնային համակարգերի և համալրող միջոցների («Հարկատու 3» համակարգի) սպասարկման ծառայություններ

Նպատակը

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում ներդրված էլեկտրոնային համակարգերի, դրանց համալրող միջոցների և ծրագրերի սպասարկման ծառայությունների իրականացում:

Մատուցվող ծառայությունների շրջանակ

1. Ապահովել ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում գործող «Հարկատու 3» էլեկտրոնային կառավարման համակարգի ստորև նշված ենթահամակարգերի անխափան աշխատանքը՝ ծրագրերում կատարելով համապատասխան շտկումներ և փոփոխություններ դրանք համապատասխանեցնելով ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված հանձնարարականներին, պահանջներին և օրենսդրական փոփոխություններին, ինչպես նաև հարկային վարչարարության առանձին դրույթներին:

«ՀԱՐԿԱՏՈՒ-3» ԷԼԵԿՏՐՈՆԱՑԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՆԹԱՀԱՄԱԿԱՐԳԵՐ

1. Փաստաթղթեր
 - Հայտարարագրերի գրանցամատյան
 - ՀԴՄ ֆիսկալ հասույթ
 - Դիմումների գրանցամատյան
 - Դրամարկղային գրքեր
 - Բողոքներ
 - ԱԱՀ-ի վերադարձի հաշիվներ
 - ԵՏՄ գործարքների դարան

2. Հաշվետվություններ
 - Հարկ վճարողների ընդհանուր դարան
 - Մաքսային տվյալներ
 - ՀԴՄ-ների հաշվետվություններ
 - Հարկային հաշիվներ
 - Հաշվարկային փաստաթղթեր
 - Տեղեկատվության հաշվետվություն
 - Լիցենզիաներ, թույլտվություններ և ծանուցումներ

3. Տեղեկատվություն
 - Տեղեկատվության ներմուծում
 - Մաքսային տվյալներ
 - Վարչական իրավախախտումներ

4. Կառավարում
 - Հարկ վճարողներ
 - ԱԱՀ վճարողներ
 - ՀԴՄ-ներ
 - Օբյեկտներ
 - Հիշեցում-ծանուցումների ենթահամակարգ
 - Բոլոր հիշեցում ծանուցումները
 - Տվյալների սուբյեկտներ
 - Գործարքների մոնիտորինգ

5. Սպասարկում

- Օգտվողի տվյալներ
- Դերերի կառավարում
- Բառարաններ
- Առցանց օգտվողներ
- Առցանց լիազորներ

6. Ռիսկերի գնահատման համակարգ

7. Ստանդարտ և ոչ ստանդարտ հաշվետվությունների ենթահամակարգ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՆԹԱՀԱՄԱԿԱՐԳԵՐ (ՀՆԷՀ)

1. Անձնական գրասենյակ

- Անհատական հաշիվ (անձնագրային տվյալներ)
- Ծանուցումներ
- Հարկ վճարողներ
- Աշխատողներ
- Դրոշմանիշեր և դրոշմապիտակներ
- ԵՏՄ գործարքների դարան
- Դրամարկղային գրքեր
- Դերերի կառավարման համակարգ

2. Հաշվետվություններ

- Հարկ վճարողների կոցմից էլեկտրոնային եղանակով հարկային մարմին հաշվետվությունների ներկայացման ենթահամակարգ:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎՆԵՐԻ ԴՈՒՐՍԳՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՆԹԱՀԱՄԱԿԱՐԳԵՐ

- Հաշվարկային փաստաթղթեր
- Հարկային հաշիվներ
- ԱԱՀ-ի վերադարձի հարկային հաշիվներ
- Էլեկտրոնային գրքեր

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

- Պետ. ռեզիստրի, ՀՀ ԿԲ և ՀՀ ԿԱ ՊԵԿ միջև տեղեկությունների փոխանակման համակարգ, հարկ վճարողների գրանցում և տվյալների թարմացում:
- ԴԱՀԿ-ին տրամադրվող տեղեկությունների համակարգ
- ՀՀ ՖՆ-ին հարկային հաշիվների մասով տեղեկությունների տրամադրման համակարգ
- ՀՀ բանկերի կողմից հարկային մարմին հարկ վճարողների հաշիվների բացման/փակման մասին տեղեկատվության փոխանակման ենթահամակարգ
- Կապի խափանման դեպքերի վերաբերյալ տեղեկատվության ապահովման ենթահամակարգ
- ԵՏՄ երկրներից ներկրման և արտահանման գործարքների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման ենթահամակարգ
- Հաշվարկային փաստաթղթերի դուրս գրման հատուկ ծրագիր (բիլինգային համակարգ) կիրառողներին հարկային հաշիվների սերիա-համարների տրամադրման և դուրս գրված հարկային հաշիվներում արտացոլված՝ սահմանված տեղեկությունների ընդունման ենթահամակարգ:
- «Հարկատու 3» և «Վերո» համակարգերի միջև տեղեկատվության փոխանակման ապահովման ենթահամակարգ:
- Հարկ վճարողների տեղեկությունների որոնման իրականացման ենթահամակարգ taxservice.am կայքի համար:
- GPRS ՀՂՄ-ների տեղեկությունների ստացման և գրանցման ենթահամակարգ:

- ԷԿՆԸՊ ՊՓԲԸ-ն համակարգի և ՀՀ ԿԱ ՊԵԿ համակարգի միջև էլեկտրոնային ստորագրությունների վավերականության ստուգման ենթահամակարգ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄ և ՀԱՐԱԿԻՑ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

- ՀԴՄ կտրոններով և ՀՓ-երով կատարվող գործարքների մոնիտորինգի համակարգ:
- Ռիսկային հարկ վճարողներին ծանուցումների ուղարկման և ծանուցումների պարզաբանման ենթահամակարգ:
- Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում դերերի կառավարման ենթահամակարգ:
- ՀՀ ԿԱ ՊԵԿ մոնիտորինգի համակարգի համար տվյալների նախնական մշակման և տրամադրման համակարգ:
- Էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթեր և գրքեր կայք համակարգ:
- «Հարկատու 3» համակարգի պարբերական տվյալների մշակման և գրանցումների ենթահամակարգ:
- «Հարկատու 3» համակարգի ադմինիստրավորման ենթահամակարգ:
- Առևտրային բանկերի կողմից հարկ վճարողների ֆինանսական հոսքերի ստուգման ենթահամակարգ:

ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի և հարկ վճարողների համար տեխնիկական խնդիրների սպասարկում թե՛ զծի միջոցով
- Հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման համակարգի և Հեռախոսազանգերի կառավարման և հաշվետվողականության ծրագրի սպասարկում:

2. Ապահովել ՀՀ ԿԱ ՊԵԿ-ն «Հարկատու 3» էլեկտրոնային կառավարման համակարգի հիմնական և թեստային սերվերների սպասարկումը, ներառելով հետևյալ գործառույթները.

- «Հարկատու 3» համակարգը սպասարկող սերվերներում նոր սարքերի ներդնում և դրանց համապատասխան համակցումը սերվերի ծրագրային ապահովման և համակարգչային մյուս սարքերի հետ: «Հարկատու 3» համակարգը սպասարկող սերվերների ծրագրային ապահովման (օպերացիոն համակարգի) պարբերական վերաթարմացում, այն անվտանգության թարմացումները, (security updates) որոնք վերացնում են գործող ծրագրերի խոցելի կողմերը անհրաժեշտ է թարմացնել 10 օրվա ընթացքում արտադրողի կողմից թարմացման թողարկման հետ կապված:
- «Հարկատու 3» համակարգը սպասարկող սերվերներում տեղադրված էլեկտրոնային համակարգի կամ «Հարկատու 3» համակարգը սպասարկող սերվերների ծրագրային բաղադրիչների պարբերական վերաթարմացում:
- «Հարկատու 3» համակարգը սպասարկող սերվերների հսկում (մոնիտորինգ) և առաջացած խնդիրների լուծման տարբերակների առաջադրում: Անսվա կտրվածքով առաջացած խնդիրների քանակը և «Հարկատու 3» համակարգը սպասարկող սերվերների ռեսուրսների օգտագործման մակարդակը արտացոլող հաշվետվության պատրաստում և տրամադրում էլեկտրոնային եղանակով:
- «Հարկատու 3» համակարգը սպասարկող նոր սերվերների կոնֆիգուրացում, ապահովելով համակցումը դրանց և համակարգում առկա սերվերների միջև:
- «Հարկատու 3» համակարգը սպասարկող սերվերներում պարունակվող տեղեկատվության մոնիտորինգ, ամբողջականության և անվտանգության ապահովում, արխիվացում:
- Առնվազն շաբաթական մեկանգամյա ամբողջական «Հարկատու 3» համակարգը սպասարկող շտեմարանի պահուստային կրկնօրինակում (back up), և օրական փոփոխությունների պահուստային կրկնօրինակում (back up), որոնք պետք է պահպանվեն առնվազն 14 օր: «Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգ»-ի, «Հարկային հաշիվներ համակարգ»-ի և «Էլեկտրոնային գրքեր համակարգ»-ի տվյալների օրական փոփոխությունների պահուստային կրկնօրինակում (back up), որը պետք պահպանվի առնվազն 14 օր: Վերոնշյալ (back up) ընթացակարգը կարող է փոփոխվել պատվիրատուի պահանջով:
- Համապատասխան գործառույթների կիրառում, որոնք կապահովվեն ՀՀ ԿԱ ՊԵԿ-ին տեղեկատվության հասանելիությունը միայն ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի ղեկավարության կողմից սահմանված անձանց: Մասնավորապես ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի տեղեկատվության պահպանում «Հարկատու 3» համակարգը սպասարկող սերվերների վրա, որոնք TCP ծառայությունների համար ուղղակիորեն հասանելի չլինեն ինտերնետից, գտնվեն փակ ցանցում DMZ և տարանջատվեն հրեպատի միջոցով (firewall):
- Համապատասխան գործառույթների կիրառում, որպեսզի «Հարկատու 3» համակարգը սպասարկող սերվերների հասանելիությունը իրականացվի իսկության ստուգումով, ինչը ենթադրում է՝
 - «Հարկատու 3» համակարգը սպասարկող բոլոր սերվերների և հրեպատերի (firewall) ադմինիստրատիվ մուտքը լինի անվտանգ՝ ներքին ցանցի միջոցով: Հեռաաշխատանքը կազմաձևել

այնպես, որ ներքին ցանց մտնելիս ստուգվի ադմինիստրատորի իսկությունը, այնուհետև ցանցի ներսում տրվի մուտք դեպի սերվերներ և հրեպատեր: Արգելվի ուղղակի մուտքը հրեպատին կամ սերվերին:

- Արգելվում է ներքին ինտերնետային պրոտոկոլ (IP) հասցեների ուղղորդումը երթուղիչի միջոցով դեպի ինտերնետ և նշված IP հասցեներին բաց տեսքով հասանելիությունը:
- Բոլոր բացառությունների, միջադեպերի, խափանումների, ադմինիստրատորների գործողությունների և ահազանգերի գրանցում տեղեկամատյաններում (log): Ըստ ՀՀ ԿԱ ՊԵԿ պահանջի տեղեկամատյանների տրամադրում:
- «Հարկատու 3» համակարգը սպասարկող սերվերների ցանցային կառուցվածքի տոպոլոգիայի (network topology) ամենամսյա տրամադրում:
- Համակարգի կողմից օգտագործողի նույնականացուցիչի և մուտքի գործընթացների բաց տեսքով փոխանցման արգելում ներքին կամ արտաքին ցանցերում:
- Ցանցային տրաֆիկի ամբողջականության և զաղտնիության ապահովում:
- Սպասարկման տրվող «Հարկատու 3» համակարգը սպասարկող սերվերների կարգաբերման և մուտքի առումների ու զաղտնաբառերի կրկնօրինակների տրամադրում:

Բացառություններ

Վերը նշված բոլոր գործառույթները չեն վերաբերվում ՀՀ ԿԱ ՊԵԿ մաքսային ծառայությանը և ընդգրկում են միայն հարկային ծառայության էլեկտրոնային համակարգերը և կապուղիները:

Հիմնական աշխատանքներ ըստ ռեսուրսների

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում գործող «Հարկատու 3» էլեկտրոնային կառավարման համակարգի ստորև նշված ենթահամակարգերի մասով կատարելով համապատասխան շտկումներ և փոփոխություններ դրանք համապատասխանեցնելով ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված հանձնարարականներին, պահանջներին և օրենսդրական փոփոխություններին, ինչպես նաև հարկային վարչարարության առանձին դրույթներին, որոնց վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ին պետք է տրամադրվի հաշվետվության ամսական կտրվածքով մատուցված ծառայությունների ծավալի չափով՝ ըստ առանձին ենթահամակարգերի.

1. «Հարկատու-3» էլեկտրոնային կառավարման համակարգի սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 80 մարդ/ժամ:
2. Հարկատու-3|Փաստաթղթեր|Հայտարարագրերի գրանցամատյան համակարգի սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 60 մարդ/ժամ:
3. Հարկատու-3|Փաստաթղթեր|ՀՂՄ ֆիսկալ հասույթ համակարգի սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 100 մարդ/ժամ:
4. Հարկատու-3|Փաստաթղթեր|Դիմումների գրանցամատյան համակարգի սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 50 մարդ/ժամ:
5. Հարկատու-3|Փաստաթղթեր|Դրամարկղային գրքեր համակարգի սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 90 մարդ/ժամ:
6. Հարկատու-3|Փաստաթղթեր|Բողոքներ համակարգի սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 40 մարդ/ժամ:
7. Հարկատու-3|Փաստաթղթեր|ԱԱՀ-ի վերադարձի հաշիվներ համակարգի սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 70 մարդ/ժամ:
8. Հարկատու-3|Փաստաթղթեր|ԵՏՄ գործարքների դարան համակարգի սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 190 մարդ/ժամ:

26. Հարկատու-3|Կառավարում|Գործարքների մոնիտորինգ համակարգի սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 200 մարդ/ժամ:
27. Հարկատու-3|Սպասարկում|Օգտվողի տվյալներ համակարգի սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 70 մարդ/ժամ:
28. Հարկատու-3|Սպասարկում|Դերերի կառավարում համակարգի սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 60 մարդ/ժամ:
29. Հարկատու-3|Սպասարկում|Բառարաններ համակարգի սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 50 մարդ/ժամ:
30. Հարկատու-3|Սպասարկում|Առցանց օգտվողներ համակարգի սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 40 մարդ/ժամ:
31. Հարկատու-3|Սպասարկում|Առցանց լիազորներ համակարգի սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 90 մարդ/ժամ:
32. Հարկատու-3|Ռիսկերի գնահատման համակարգի սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 90 մարդ/ժամ:
33. Ստանդարտ և ոչ ստանդարտ հաշվետվությունների ենթահամակարգի սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 100 մարդ/ժամ:
34. Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի (ՀՆԷՀ, file-online) սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 100 մարդ/ժամ:
35. ՀՆԷՀ|Անձնական գրասենյակ|Անհատական հաշիվ (անձնագրային տվյալներ) համակարգի սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 40 մարդ/ժամ:
36. ՀՆԷՀ|Անձնական գրասենյակ|Ծանուցումներ համակարգի սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 50 մարդ/ժամ:
37. ՀՆԷՀ|Անձնական գրասենյակ|Հարկ վճարողներ համակարգի սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 50 մարդ/ժամ:
38. ՀՆԷՀ|Անձնական գրասենյակ|Աշխատողներ համակարգի սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 50 մարդ/ժամ:
39. ՀՆԷՀ|Անձնական գրասենյակ|Դրոշմանիշեր և դրոշմապիտակներ համակարգի սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 80 մարդ/ժամ:
40. ՀՆԷՀ|Անձնական գրասենյակ|ԵՏՍ գործարքների դարան համակարգի սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 100 մարդ/ժամ:
41. ՀՆԷՀ|Անձնական գրասենյակ|Դրամարկղային գրքեր համակարգի սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 90 մարդ/ժամ:

42. ՀՆԷՀ/Դերերի կառավարման համակարգ համակարգի սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 90 մարդ/ժամ:
43. ՀՆԷՀ/Հաշվետվություններ համակարգի սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 250 մարդ/ժամ:
44. Էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվների (Էլ. հարկային հաշիվներ) դուրսգրման համակարգի սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 80 մարդ/ժամ:
45. Էլ. հարկային հաշիվներ/Հաշվարկային փաստաթղթեր համակարգի սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 60 մարդ/ժամ:
46. Էլ. հարկային հաշիվներ/Հարկային հաշիվներ համակարգի սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 60 մարդ/ժամ:
47. Էլ. հարկային հաշիվներ/ԱԱՀ-ի վերադարձի հարկային հաշիվներ համակարգի սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 60 մարդ/ժամ:
48. Էլ. հարկային հաշիվներ/Էլեկտրոնային գրքեր համակարգի սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 40 մարդ/ժամ:
49. Տեղեկատվության փոխանակում/Պետ. ռեզիստրի, ՀՀ ԿԲ և ՀՀ ԿԱ ՊԵԿ միջև տեղեկությունների փոխանակման համակարգ, հարկ վճարողների գրանցում և տվյալների թարմացում համակարգի սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 80 մարդ/ժամ:
50. Տեղեկատվության փոխանակում/ԴԱՀԿ-ին տրամադրվող տեղեկությունների համակարգի սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 30 մարդ/ժամ:
51. Տեղեկատվության փոխանակում/ՀՀ ՖՆ-ին հարկային հաշիվների մասով տեղեկությունների տրամադրման համակարգի սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 30 մարդ/ժամ:
52. Տեղեկատվության փոխանակում/ՀՀ բանկերի կողմից հարկային մարմին հարկ վճարողների հաշիվների բացման/փակման մասին տեղեկատվության փոխանակման ենթահամակարգի սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 50 մարդ/ժամ:
53. Տեղեկատվության փոխանակում/Կապի խափանման դեպքերի վերաբերյալ տեղեկատվության ապահովման ենթահամակարգի սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 20 մարդ/ժամ:
54. Տեղեկատվության փոխանակում/ԵՏՄ երկրներից ներկրման և արտահանման գործարքների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման ենթահամակարգի սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 60 մարդ/ժամ:
55. Տեղեկատվության փոխանակում/Հաշվարկային փաստաթղթերի դուրս գրման հատուկ ծրագիր (բիլինգային համակարգ) կիրառողներին հարկային հաշիվների սերիա-համարների տրամադրման և դուրս գրված հարկային հաշիվներում արտացոլված՝ սահմանված տեղեկությունների ընդունման ենթահամակարգի սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 80 մարդ/ժամ:
56. Տեղեկատվության փոխանակում/«Հարկատու 3» և «Վերո» համակարգերի միջև տեղեկատվության փոխանակման ապահովման ենթահամակարգի սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված

սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 40 մարդ/ժամ:

57. Տեղեկատվության փոխանակում/taxservice.am կայքի համար հարկ վճարողների տեղեկությունների որոնման իրականացման ենթահամակարգի սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 20 մարդ/ժամ:
58. Տեղեկատվության փոխանակում/GPRS ՀԴՄ-ների տեղեկությունների ստացման և գրանցման ենթահամակարգի սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 40 մարդ/ժամ:
59. Տեղեկատվության փոխանակում/ԷԿԵՆԳ ՊՓԲԸ-ն համակարգի և ՀՀ ԿԱ ՊԵԿ համակարգի միջև էլեկտրոնային ստորագրությունների վավերականության ստուգման ենթահամակարգի, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 70 մարդ/ժամ:
60. Տեղեկատվության մշակում և հարակից համակարգեր/ՀԴՄ կտրոններով և ՀՓ-երով կատարվող գործարքների մոնիտորինգի համակարգի սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 100 մարդ/ժամ:
61. Տեղեկատվության մշակում և հարակից համակարգեր/Ռիսկային հարկ վճարողներին ծանուցումների ուղարկման և ծանուցումների պարզաբանման ենթահամակարգի սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 80 մարդ/ժամ:
62. Տեղեկատվության մշակում և հարակից համակարգեր/Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում դեբերի կառավարման ենթահամակարգի սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 50 մարդ/ժամ:
63. Տեղեկատվության մշակում և հարակից համակարգեր/ՀՀ ԿԱ ՊԵԿ մոնիտորինգի համակարգի համար տվյալների նախնական մշակման և տրամադրման համակարգի սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 60 մարդ/ժամ:
64. Տեղեկատվության մշակում և հարակից համակարգեր/Էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթեր և գրքեր կայք համակարգի սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 70 մարդ/ժամ:
65. Տեղեկատվության մշակում և հարակից համակարգեր/«Հարկատու 3» համակարգի պարբերական տվյալների մշակման և գրանցումների ենթահամակարգի սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 60 մարդ/ժամ:
66. Տեղեկատվության մշակում և հարակից համակարգեր/«Հարկատու 3» համակարգի ադմինիստրատորման ենթահամակարգի սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 60 մարդ/ժամ:
67. Տեղեկատվության մշակում և հարակից համակարգեր/Առևտրային բանկերի կողմից հարկ վճարողների ֆինանսական հոսքերի ստուգման ենթահամակարգի սպասարկում, ինչը ներառում է հայտնաբերված սխալների ուղղումը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 50 մարդ/ժամ:
68. Այլ ծառայություններ/ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի և հարկ վճարողների համար տեխնիկական խնդիրների սպասարկում թե՛ զծի միջոցով, ինչը ներառում է հարկ վճարողների տեխնիկական մակարդակի հարցերի պատասխանում և խնդիրների շտկում: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 330 մարդ/ժամ:

69. Հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման համակարգի և Հեռախոսագանգերի կառավարման և հաշվետվողականության ծրագրի սպասարկում: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 300 մարդ/ժամ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ն «Հարկատու 3» էլեկտրոնային կառավարման համակարգի հիմնական և թեստային սերվերների սպասարկումը, ներառելով հետևյալ գործառույթները.

1. «Հարկատու 3» համակարգի հիմնական և թեստային միջավայրերի սերվերների տեխնիկական խափանման դեպքում պատվիրատուի կողմից տրամադրվող սարքավորումների փոխարինում և ներդնում կատարողի կողմից՝ ապահովելով սերվերների անխափան աշխատանքը: «Հարկատու 3» համակարգը սպասարկող սերվերների ծրագրային ապահովման (օպերացիոն համակարգի) պարբերական վերաթարմացում, այն անվտանգության թարմացումները, (security updates) որոնք վերացնում են գործող ծրագրերի խոցելի կողմերը անհրժեշտ է թարմացնել 10 օրվա ընթացքում արտադրողի կողմից թարմացման թողարկման հետ կապված: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 90 մարդ/ժամ:
2. «Հարկատու 3» համակարգը սպասարկող սերվերներում տեղադրված էլեկտրոնային համակարգի կամ սերվերների ծրագրային բաղադրիչների պարբերական վերաթարմացում: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 70 մարդ/ժամ:
3. «Հարկատու 3» համակարգը սպասարկող սերվերների հսկում (մոնիտորինգ) և առաջացած խնդիրների լուծման տարբերակների առաջադրում: Ամսվա կտրվածքով առաջացած խնդիրների քանակը և «Հարկատու 3» համակարգը սպասարկող սերվերների ռեսուրսների օգտագործման մակարդակը արտացոլող հաշվետվության պատրաստում և տրամադրում էլեկտրոնային եղանակով: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 70 մարդ/ժամ:
4. «Հարկատու 3» համակարգը սպասարկող նոր սերվերների կոնֆիգուրացում, ապահովելով համակցումը դրանց և համակարգում առկա սերվերների միջև: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 50 մարդ/ժամ:
5. «Հարկատու 3» համակարգը սպասարկող սերվերներում պարունակվող տեղեկատվության մոնիտորինգ, ամբողջականության և անվտանգության ապահովում, արխիվացում: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 50 մարդ/ժամ:
6. Առնվազն շաբաթական մեկանգամյա «Հարկատու 3» համակարգը սպասարկող ամբողջական շտեմարանի պահուստային կրկնօրինակում (back up), և օրական փոփոխությունների պահուստային կրկնօրինակում (back up), որոնք պետք է պահպանվեն առնվազն 14 օր: «Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգ»-ի, «Հարկային հաշիվներ համակարգ»-ի և «Էլեկտրոնային գրքեր համակարգ»-ի տվյալների օրական փոփոխությունների պահուստային կրկնօրինակում (back up), որը պետք է պահպանվի առնվազն 14 օր: Վերոնշյալ (back up) ընթացակարգը կարող է փոփոխվել պատվիրատուի պահանջով: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 50 մարդ/ժամ:
7. Համապատասխան գործառույթների կիրառում, որոնք կապահովվեն ՀՀ ԿԱ ՊԵԿ-ին տեղեկատվության հասանելիությունը միայն ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի ղեկավարության կողմից սահմանված անձանց: Մասնավորապես՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի տեղեկատվության պահպանում «Հարկատու 3» համակարգը սպասարկող սերվերների վրա, որոնք TCP ծառայությունների համար ուղղակիորեն հասանելի չլինեն ինտերնետից, գտնվեն փակ ցանցում DMZ և տարանջատվեն հրեպատի միջոցով (firewall): Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 50 մարդ/ժամ:
8. Համապատասխան գործառույթների կիրառում, որպեսզի սերվերների հասանելիությունը իրականացվի իսկության ստուգումով, ինչը ենթադրում է՝
 - a. «Հարկատու 3» համակարգը սպասարկող բոլոր սերվերների և հրեպատերի (firewall) ադմինիստրատիվ մուտքը լինի անվտանգ՝ ներքին ցանցի միջոցով: Հեռաաշխատանքը կազմաձևել այնպես, որ ներքին ցանց մտնելիս ստուգվի ադմինիստրատորի իսկությունը, այնուհետև ցանցի ներսում տրվի մուտք դեպի սերվերներ և հրեպատեր: Արգելվի ուղղակի մուտքը

հրեպատին կամ սերվերին: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 40 մարդ/ժամ:

- 6. Արգելվում է ներքին ինտերնետային պրոտոկոլ (IP) հասցեների ուղղորդումը երթուղիչի միջոցով դեպի ինտերնետ և նշված IP հասցեներին բաց տեսքով հասանելիությունը: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 40 մարդ/ժամ:
- 9. Բոլոր բացառությունների, միջադեպերի, խափանումների, աղմինխատրատորների գործողությունների և ահազանգերի գրանցում տեղեկամատյաններում (log): Ըստ ՀՀ ԿԱ ՊԵԿ պահանջի տեղեկամատյանների տրամադրում: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 40 մարդ/ժամ:
- 10. «Հարկատու 3» համակարգը սպասարկող սերվերների ցանցային կառուցվածքի տոպոլոգիայի (network topology) ամենամսյա տրամադրում: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 30 մարդ/ժամ:
- 11. Համակարգի կողմից օգտագործողի նույնականացուցիչի և մուտքի գործընթացների բաց տեքստով փոխանցման արգելում ներքին կամ արտաքին ցանցերում: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 40 մարդ/ժամ:
- 12. Ցանցային տրաֆիկի ամբողջականության և զաղտնիության ապահովում: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 50 մարդ/ժամ:
- 13. Սպասարկման տրվող սերվերներների կարգաբերման և մուտքի անունների ու զաղտնաբառերի կրկնօրինակների տրամադրում: Ամսական կտրվածքով մատուցվող ծառայությունների ծավալը պետք է կազմի առնվազն 40 մարդ/ժամ:

Ծառայության մատուցման ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 15-ը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ կառավարությանն առընթեր
պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900011054013

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝

ԿԱՏԱՐՈՂ


«Այյունեթվորքս» ՍՊԸ

ք. Երևան, Պուշկինի 38/1, շին.55
ՀՎՀՀ 02588485
Հ/Հ 1930042785480100
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
«Այյունեթվորքս» ՍՊԸ-ի տնօրեն՝

Ա.Սահակյան



Վ.Մերանգույան



Պայմանագրի կողմ

 գտնվելու վայրը _____
 հհ _____
 հվհհ _____

Պատվիրատու

 գտնվելու վայրը _____
 հհ _____
 հվհհ _____

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴԻՄ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
 ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների						Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամկետի/
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

 ստորագրություն

 ազգանուն, անուն
 Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

 ստորագրություն

 ազգանուն, անուն
 Կ.Տ.

ԱԿՏ N
 պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____ -ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____ -ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____ -ին հանձնման-ընդունման
 նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

 ազգանուն, անուն

 ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

 ազգանուն, անուն

 ստորագրություն